

4475

281.69

G-63

W²-922

W²-922

2010

28169

Ն-63

wp


ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆԵՐՍԷՍ ՄԵԾ

Հայաստանեաց Ս. Եկեղեցին տօ-
նում է ազգի այս մեծ բարերարի յի-
շատակը Ս. Լուսավորչի պաշոյց բարե-
կենդանի կիրակէի նախնիաց շա-
բաթ օրը միշտ:



Գինն է ՀԻՆԳ կոպէկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊՐԻՆՏ

Дозволено Цензурою. Тифлисъ, 1885 г. 2 Мая



(6245/41)

17104-58

ՆԵՐՍԷՍ ՄԵԾ¹

Ներսէս առաջին և Մեծ՝ Հայոց հայրապետը Յուսիկ կաթողիկոսի թոռն էր. ասել է՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի թոռան թոռը: Նորա հօր անունը Աթանաղիսն էր, իսկ մօր անունը Բամբիշ, որ Տիրան թագաւորի քոյրն էր: Հետեւապէս Ս. Ներսէս հօր կողմից Լուսաւորչի սերունդիցն էր, իսկ մօր կողմից Արշակունի թագաւորական ցեղից: Նա ծնած է 325 թ., վախճանած 383-ին և կաթողիկոս եղած է 34 տարի:

Յուսիկ առաքինի կաթողիկոսը շատ էր սիրում իւր Ներսէս թոռնիկին և սկսեց հոգալ, որ մանուկի փափուկ սրբտի մէջ միշտ առաքինութեան սերմեր ցանուին: Իսկ երբ Ներսէս փոքր ինչ մեծացաւ, Յուսիկ հայրապետը ուղարկեց նորան Կեսարիա (այժմեան Ղայսերի) լաւ կրթութիւն ստանալու համար:

Պատանի Ներսէսը իւր ուսումնական յառաջադիմութիւնովը և ընտիր առաքինութիւններովը զարմացնում էր իւր բոլոր ուսուցիչներին ու աշակերտներին և շատ սիրելի էր ամենքին:

¹ Այս կենսագրութիւնը գլխաւորապէս Հ. Ղևոնդ Յովնանեանի «Մեծն Ներսէս» աշխատասիրութիւնիցն է բաղուած, որ տպուած է Վիեննա 1851 թ.

Դեռ ուսումը չէր աւարտած Ներսէս) երբ իւր Յուսիկ պապի մահուան բոլոր ստացաւ. նա մեծ ցաւ զգաց, որովհետեւ ինքը անչափ էր սիրում նրան: Այդ պատճառով երբ ուսումն աւարտեց, չուզեց իսկոյն Հայրենիք վերադառնալ, ուր այլեւ չկար իւր առաքինի և խնամատար պապը: այլ դուրս գալով Կեսարիայից գնաց Պօլիս: Միքանի ժամանակից յետոյ այնտեղ գտնուող Մամիկոնեան երեւելի իշխաններից մէկի Սանդուխտ անունով դստեր հետ ամուսնացաւ, որից ծնաւ Ս. Սահակ Պարթև, որնոր յետոյ կաթողիկոս դառնալով՝ արժանի յաջորդ եղաւ իւր ընտիր հօրը: Երեք տարուց յետոյ ամուսինը վախճանուելով Ներսէս, այլեւ անկարող լինելով Հայրենիքից հեռու մնալ, Հայաստան վերադարձաւ:

Արշակ Բ. Հայոց թագաւորը՝ որ յաջորդած էր իւր ծիրան հօրը, Ս. Ներսէսի զայլուստը լսելով, կանչեց իւր մօտ իւր երիտասարդ ազգականին (Ներսէսը Արշակի հօրաքրոջ որդին էր) և նշանակեց նրան արքունի սենեկապետ, իսկ թագաւորական բոլոր պալատի համար՝ գործակալ:

Այժմ էլ պաշտօնավարութեան մէջ երևեցան Ներսէսի բոլոր ազնիւ յատկութիւնները: Աստուածսիրութիւնը և մարդասիրութիւնը հաւասար աստիճանի վառուած լինելով նրա սրտի մէջ, իւր գործերն էլ համաձայն էին այդ երկու առաքելութիւններին: Բարեգործութիւն անելու մէջ ամենեւին չէր յոգնում: Խիստ երկիւղած էր. Աստուծու և եկեղեցու պատուիրանքներին ճիշտ և զգուշաւոր աւանդապահ էր:

Նրա ընկերսիրութիւնը այնքան սաստիկ էր, որ ճշմարտիւ գործ էր դնում Քրիստոսի այն խրատը, թէ «ձեր ընկերին սիրեցէք ինչպէս ձեր անձը»: Չափից դուրս աղքատասէր էր և այն աստիճան գութ ու խնամք ունէր կարօ-

տեալների վրայ, որ հարկաւոր եղած ժամանակ իւր զգեստներն անգամ նրանց էր տալիս: Բոլոր վշտացածներին և նեղութեան մէջ եղածներին օգնութիւն էր անում: ամեն որբերին, այրիներին ուղղութեամբներին պաշտպան էր հանդիսանում: Նրա եղբայրսիրութեանը հաւասար էր ամեն գործքի և դէպքի մէջ ցոյց տուած արդարասիրութիւնը: Արքայպէս նրա հեղութիւնը, նրա բնաւորութեան քաջրութիւնն ու խոնարհութիւնը իբրեւ մէկ-մէկ գոհար փայլում էին նրա վրայ, այնպէս որ մեծն ու փոքրը, առաքինին և մոլին՝ բոլորն էլ յարգում էին նրան և ակնածում նրանից:

Բնութիւնն էլ տուած էր նրան վեհ և շնորհալից կերպարանք, այնպէս որ նրա հոգու վայելչութեանն ու վսեմութեանը համաձայն էր նրա արտաքին տեսքը ևս:

Յուսիկ Հայրապետի մահուանից յետոյ կաթողիկոս ընտրուեց Փառնէս կամ Փառներսէհ, որ Յուսիկի ժառանգներից չէր: Իսկ Փառներսէհի մահից յետոյ՝ երբ ընդհանուր ժողովեւ մէջ որոշուեց, որ նորընտիր Հայրապետը լուսաւորչի սերունդից լինի¹⁾, ամենքի ուշադրութիւնն իսկոյն Ներսէսի վրայ դարձաւ և ժողովականք միաձայն սկսեցին խնդրել, որ նա ընտրուի կաթողիկոս: Թագաւորն էլ իւր կողմից ուրախութիւնով հաւանեց այդ բանին: Միայն դժուարութիւնը նրանում կայացաւ, որ Ներսէսն ինքը չէր համաձայնում ասելով որ՝ «ես մեղքերով ու պակասութիւններով լցուած մարդ եմ և բոլորովին անարժան այդպիսի նուիրական աստիճանի բարձրանալու»:

¹⁾ Մինչև Ներսէսի ժամանակները և նրա որդի Սահակ Պարթևը ևս ամուսնացած անձինք էին, բայց Պարթևից յետոյ կաթողիկոս ընտրվում են չամուսնացած հոգևորականներ:

Բայց չնայելով թէ՛ այս և թէ՛ ուրիշ պատճառներին, ժողովականք հաստատ մնացին իրենց ընտրութեանը և խընդիրքին, որոնց զիջանելու ստիպուեց և Ս. Ներսէս: Ընտրութիւնից յետոյ անյապաղ ինչպէս որ մինչ այդ օր սովորութիւն էր, Ս. Ներսէս պէտք է զնար Կեսարիա և կաթողիկոս ձեռնադրուէր այնտեղի հայրապետից: Հայոց զօրքի Բագարատ սպարապետը շատ երևելի նախարարների, կալիսկոպոսների ու զաւառակալների հետ թափառորական հրամանով և ընտրութեան վաւերական թղթով ու շատ ընծաներով Ս. Ներսէսին նստեցրին սպիտակ ջորիներով լծած արքայական կառքի մէջ և ճանապարհ ընկան Կեսարիա քաղաքը, որը այն ժամանակ Բիւզանդացիների իշխանութեան տակն էր:

Ձեռնադրութեան սմենափառաւոր հանդիսից յետոյ վերադառնալիս, երբ Հայոց թագաւորութեան ռահմանը մտան, Ս. Հայրապետի զալստեան լուրը իսկոյն ամեն տեղ տարածուեց և ամեն կողմից հազարաւոր ու բիւրաւոր մարդիկ ժողովում էին և ճանապարհի վրայ հաւաքվելով՝ ցնծութեան աղաղակներով ողջունում էին իրենց նորընտիր հայրապետին և նրա օրհնութիւնն ստանում: Իսկ երբ Ս. Ներսէս մօտեցաւ մայրաքաղաքին, Արշակ թագաւորը մեծ հանդիսով նրան ընդառաջ ելաւ և մեծ ուրախութիւնով միասին վաղարշապատ վերադարձան:

Ամեն տեղ քաղաքներն ու հրապարակները լցուած էին ժողովրդով, ամեն ոք ցանկանում էր իրենց սիրելի հայրապետի երեսը տեսնել և նրա օրհնութիւնն ստանալ:

Այսպէսով մի առժամանակ այրիացած եկեղեցին իւր

ազի հանդերձները թողնելով, ցնծութեան պայծառ և վայելուչ զգեստները հագաւ:

Ամեն բան կարգով անելու և բարիքը բոլոր Հայաստան երկրի վրայ տարածելու համար՝ Ներսէս-Մեծը ամենից առաջ կամեցաւ իւր հոգեւորականներով եկեղեցական ժողով գումարել: Ուստի շուտով Հայոց բոլոր արքեպիսկոպոսներին և եպիսկոպոսներին հրաւիրեց Տարօնի Աշտիշատ քաղաքը, ուր գտանվում էր Հայաստանի առաջին եկեղեցին: Ժողովի մէջ, որի նախագահն ու հոգին ինքը երանելի հայրապետն էր, լուսելով ամեն մէկից նրանց թեմերի կարօտութիւնները, իւր կողմից ևս յայտնեց իւր տեսածներն ու նշմարածները:

Մեծ և կարեւոր որոշումներ եղան այդ ժողովքի մէջ և երբ ժողովականք վերադարձան իրենց թեմերը, իսկոյն սկսեցին գործ դնել այդ որոշումները:

Ամեն զաւառի և նշանաւոր քաղաքների մէջ սկսեցին աղքատանոցներ, հիւանդանոցներ շինել և ժողովրդի կամաւոր նուէրներից հաւաքուած փողերով անշարժ կայուածքներ գրանեցին յիշեալ հաստատութիւնները ապահովացնելու համար: Տեղ-տեղ առանձին ապաստարաններ հիմնեցին բորոտների և այլ վատ հիւանդների վրայ խնամք տանելու համար, որովհետեւ այս վերջին տեսակ մարդիկը մինչ այն օրը, հակառակ քրիստոնէական սիրոյ, շրջապատող մարդկանցից մերժվում էին: Գլխաւոր ճանապարհների վրայ իջևաններ շինեցին, որպէս զի ճանապարհորդները ստիպուած չլինին զիշերը բացօթեայ անցկացնելու և այդպիսով վտանգների ենթարկուելու: Հարկաւոր եղած տեղերը եկեղեցիներ շինեցին, իսկ փա-

կուածները կամ քնասուածները սկսեցին բանալ և վերանորոգել։ Ամեն տեղ քահանաների թիւը ըստ պատշաճի լրացնելով՝ եկեղեցական կարգ ու կանոնի ծաղկելու և պայծառանալու մասին հոգս էին քաշում։ շատ տեղեր էլ հիմնում էին վանքեր և եղածները վանքական օրէնքի համաձայն կարգաւորում։

Լաւ գիտենալով որ ժողովրդի բարքի ու վարքի ուղղութեան համար բացի կրօնից և աստուածապաշտութիւնից, հարկաւոր է նաև գիտութիւն և կրթութիւն, որոնք կանոնաւոր դպրոցների մէջ կարող են նպատակադարձար կերպով աւանդուել մանաւանդ թէ կրօնական նիւթերի մէջ հիմնովին կրթելու համար, մանուկները իրենց փոքր հասակից սկսած պէտք է դպրոց յաճախեն, սկսեցին ամեն տեղ դպրոցներ բանալ։

Թէպէտ այս բոլոր գործերի համար մեծ դրամական միջոցներ էին հարկաւոր, բայց այդ բոլորը կատարվում էին հեշտութիւնով, որովհետև Ս. Նէրսէսի անձնական օրինակը և նրա համոզել և սրտաշարժ խօսքերը, բոլոր հայ հոգեւորականութեան ազնիւ եռանդն ու բարի ուղղութիւնը ժողովրդի վրայ այնքան զօրեղ ազդեցութիւն էին անում, որ շատ խստասիրտ և անգութ մարդիկ անգամ, որոնք փոքր քննաւաճ իրենց քսակի բերանը, ևս առաւել իրենց սիրտը, փակած էին բարի գործերի համար, այժմ առատաձեռնութիւնով նպաստ էին տալիս աղքատներին, իսկ կարօտեալներին՝ օգնութիւն։

Այս բոլորը լինում էր մեծ Հայրապետի աչքի առաջ նրա զծած ուղղութիւնով։ Ինքը իւր բոլոր ժամանակը նուիրած էր իւր ժողովրդեան, իւր սիրելի հոգեւոր ղաւակներին

կամ թէ այցելութիւն էր դնում եկեղեցիներին, վանքերին, դպրոցներին, հիւանդներին, աղքատներին և բանտարկեալներին, մխիթարում էր նրանց մէջ եղածներին, խնամում էր նրանց և աշխատում էր վերջիններին Աստուծոյ ճանապարհը դարձնելու։ Տեղ-տեղ էլ մնացած գերիներն աղաւտեց ստրկութիւնից կամ միջնորդութիւնով կամ վտորդ։ Առանց որեւէ բանից քաշուելու, ամենքին՝ մեծին և փոքրին, հարստին և աղքատին, ազնուականին և շինականին ճշմարտութիւն էր քարոզում և եթէ հարկաւոր էր՝ սաստում, յանդիմանում։ Թագաւորներին և նախարարներին խրատում էր սիրով և քաղցրութիւնով վարուել իրենց հպատակների և ստորադրեալների հետ, իսկ վերջիններին խրատում էր պարտաճանաչ լինել և ըստ պատշաճի հնազանդութիւն և հպատակութիւն ցոյց տալ։

Գլխաւորապէս սաստիկ կոչում էր միքանի անկարգութիւնների դէմ։ Սրանցից մէկն այն էր, որ մեծ նախարարները, իրենց ցեղի հարստութիւնը ուրիշին չտալու և ազնուականութիւնը չխառնելու համար, պսակվում էին մերձաւոր աղաքականների հետ։ Երկրորդն այն էր, որ հին հեթանոսական սովորութեան համաձայն մեռելի վերայ սաստիկ այլանդակ կոծ ու սուք էին անում վայելքով ու աղաղակներով, կարծես այլևս հանդերձեալ կեանք չկար։

Նոյնպէս էլ չէր կարող համբերել քոտութեան և չարախօսութեան և ամենայն կերպով աշխատում էր խափանել նրանց։

Ս. Ներսէս թէպէտ բնութիւնով հեզ էր և քաղցր, սակայն որտեղ հեզութիւնն ու քաղցրութիւնը բաւական չէին լինում չարիքի առաջն առնելու, այնտեղ խստութիւն և սաստկութիւն էլ էր գործ դնում, բայց այնուամենայնիւ

միշտ ամենքին և ամեն առիթի մէջ բազմազուլթ հօր և զթաճ
մօր սէր ու խնամք էր ցոյց տալիս:

Դժբախտաբար Արշակ թագաւորը, որնոր առաջ իրա կոչ-
մանը և դիրքին վայելուչ կեանք էր վարում, վերջին ժամանակ-
ներն սկսեց զեղխութեան մէջ ընկնել: Իսկ քրիստոնէութիւնը
հայ-ժողովրդեան մէջ ամրացած լինելով, հայերը բնականա-
բար պէտք է Բիւզանդական քրիստոնեայ ժողովրդեան հետ
դաշնակցութիւն կազմէին Պարսից Սասանեան զօրացող կը-
ռապաշտ քաղաքականութեան դէմ: Բայց Հայաստանի Պար-
սից դրացի լինելը, Արշակի հակումները և միջանի նախա-
բարների դէպի պարսիկները ունեցած համակրութիւնը Հա-
յոց թագաւորին միշտ տատանման մէջ էին պահում երկու,
այդ միջոցին զօրեղ տէրութիւնների մէջ, այնպէս որ երբ նա
մի կողմին աւելի բարեկամութիւն ցոյց տալու փորձն էր ա-
նում, միւսի հետ պէտք է վարուէր թշնամաբար և ընդ հա-
կառակն:

Մի անգամ ևս, երբ թագաւորը ըստ սովորութեան
տէրութեան հոգսերը մոռացած, զբօսանքների յետեւից էր
ընկած, Բիւզանդական մի ահեղ բանակ Հայաստանին էր մօ-
տենում: Արշակն այս լուրը լսելուն պէս, խիստ շփոթուեց և
ուրիշ ճար չգտնելով՝ դիմեց Ս. Ներսէսին և նրա խորհուր-
դին ու օգնութիւնը խնդրեց: Ներսէսը բոլոր հանգամանքները
կշռելով խորհուրդ տուեց նախ Յունաց զօրքի հրամանատարի
և ապա Վայսեր սիրտը առնելու և վերջինիս՝ Վաղնիսիանոս
կայսեր պահանջները կատարելով՝ հետը հաշտուել: Այս բո-
լորը գլուխ բերելու համար ինքը՝ մեծն Ներսէս, առիպուեց

գնալ Թէոդոս զօրապետի մօտ և իւր ազդեցութիւնով բո-
լորը կատարեց այնպէս, ինչպէս որ կարելի էր այն հանգա-
մանքների մէջ: Յետոյ անձամբ գնաց Պօլիս և կայսրին հաշ-
տեցնելով, թէ նրա կողմից, թէ բոլոր քաղաքի կողմից մեծ
ընդունելութիւն, սէր և պատիւ գտած՝ այնտեղի պատանդ-
ներն էլ ազատելով՝ առաւ հետն ու վերադարձաւ Հայաստան:

Բայց Արշակը իւր արած միջանի սարսափելի չարութիւն-
ների համար զրկուեց Ս. Ներսէսի ներկայութիւնից, որ բա-
ցարձակապէս թողեց նրան և արքունիքից իրեն հեռու պա-
հեց: Թագաւորը զուրկ մնալով Ներսէսի իմաստուն խորհուրդ-
ներից, սկսեց մեծ-մեծ սխալներ գործել, որոնցով թէ իրեն
և թէ հայրենիքը մեծ վտանգների ու վնասների մէջ ձգեց:
Որպէս իրաւամբ նկատում է Եղիշէն էլ թէ՛ «Թագաւոր, որ ոչ ու-
նի զիմաստութիւն աթոռակից իւր, ո՛չ կարէ ՚ի վնասի իւրում՝
վայելուչ գոյ:» (Այն թագաւորն, որն որ իւր պաշտօնի հետ իմաս-
տութիւն խելք չունի, չի կարող իւր վնասի մէջ բաղդաւոր լինել:

Օրինակի համար յիշենք այստեղ դրանցից մէկը: Արշա-
կը կամենալով իւր անունը անմահացնել, փոխանակ՝ արդար
և օրինական ճանապարհով մեծագործութիւններ անելու, դիմեց
սխալ միջոցների: Նա ուղեց մի քաղաք շինել Մասիսի մօ-
տերքում Արշակաւան անունով և որպէս զի այդ քաղաքը
շուտով մեծանայ և բազմամարդ լինել, հրաման հանեց, որ
նրա մէջ բնակելու համար եկողներին առաջուց գործած չա-
րութիւնների համար ո՛չ քննութիւն լինի և ո՛չ դատաստան:
Իհարկէ ամեն կողմից խելոյն բազմութիւն չարագործներով
լցուեց, նորաշէն քաղաքը և որ աւելի վատն էր, շատերը
սկսեցին գողութիւն, աւազակութիւն, ապանութիւն և այլ
չարագործութիւններ անել և իրենց նոր դիզած հարստու-
թիւններով դէպի Արշակաւան դիմել, այն տեղ այդ բոլորը

հանդիսաւ կերպով վայելելու: Այսպիսով իհարկէ քաղաքը բազմամարդ դարձաւ և Արշակը չամաչեց և իւր արքունիքը փոխադրել այնտեղ:

Իսկ նախարարները բոլոր ժամանակ Արշակի այդ այլանդակ կարգադրութիւնների դէմ շատ բողոքեցին, բայց Արշակը նրանց չլսեց: Այն ժամանակ նրանք միաբանութիւն կազմեցին և երբ մի անգամ Արշակը բացակայ էր, զօրքով յարձակուեցան Արշակաւանի վրայ և հիմնադրաւ արին ու կործանեցին քաղաքը և բոլոր ժողովրդեան առանց խտրութեան՝ կոտորեցին, բացի մանուկներից, որոնց ազատեց Ս. Ներսէս՝ հաղիւ կարողանալով վրայ հասնել կոտորածի վերջին: Այդ մանուկներին նա որթերով (քթոցներով) մի տեղ հաւաքել տուեց և նրանց խնամելու կարգադրութիւններ արաւ: Այդ տեղը յետոյ աճեց և այդ նոր ժողովուրդը կոչուեց Որդք, որթերով կրուելու համար: Ուրեմն այս աւանը ևս պտուղ և յիշատակներից մէկն էր մեծն Ներսէսի մարգասիրութեան և հայրական հսկողութեան:

Արշակաւանի աւերման պատճառով թաղաւորի և նախարարների մէջ եղած թշնամութիւնն աւելի ևս զօրացաւ և Հայաստանը ոչ միայն իւր զաւակների արիւնով պէտք է ներկուէր ներքին երկպառակութեան պատճառով, այլև օտար թշնամուց ոսնակով լինէր, որովհետև Արշակը կրկին թշնամեցել էր Բիւզանդական կայսրերի հետ և Թէոդոս կրկին մեծ զօրքով մօտենում էր Հայաստանի սահմաններին:

Այս բոլորը տեսնելով՝ չդիմացաւ Ս. Հայրապետի սիրտը. նա կրկին մէջ մտաւ, ոչ միայն հաշտեցրեց թաղաւորին իւր նախարարների հետ, համոզելով նրանց հեռու մնալ միմեանց արիւն թափելուց, այլև միաբանութիւն հաստատեց

նրանց մէջ՝ օտար յարձակմունքների դէմ միասին կռուելու: Բացի այդ գնաց Թէոդոսի մօտ և նրան այս անգամ ևս համոզեց ոչ մի չարիք չհասցնել հայաշխարհին և ապա ինքն էլ ուղևորուեց Պօլիս:

Բայց այս անամ արիոսեան աղանդին պատկանող վաղէս կայսրը, որ յաջորդել էր վաղենտինոսին, առանց թաղաւորի թուղթը կարդալու և առանց նրա երեսը տեսնելու, նախապէս առաջարկեց արիոսեան աղանդին ընդունելու և երբ Մ. Ներսէս մերժեց այդ բանը, հրամայեց աքսորել նրան կղզիներից մէկի վերայ: Վաղէս առհասարակ հալածում էր քրիստոնէական ուղղավառ եկեղեցու հայրապետներին, և թէպէտ Ներսէս այս բանը շատ լաւ գիտէր գնալուց առաջ, բայց իւր հայրենիքի և իւր եկեղեցու օգտի համար՝ նրանց վտանգից ազատելու, յանձն առաւ և այդ տեսակ վտանգների ևս ենթարկուել, քանի որ հարկը պահանջում էր: Նաւակոծութեան պատճառով Ս. Ներսէսին տանող նաւը մի անբնակ կղզու մօտ խորտակուեց և Ս. Ներսէս իւր ընկերով ութ ամսի չափ մնաց այդ կղզու վրայ ենթարկուելով ամեն տեսակ նեղութիւնների:

Ահա այդ միջոցին վաղէս մեռնելով, կայսերական դահլի վրայ բարձրացաւ Մեծն Թէոդոս, Ներսէսի հին բարեկամը, որն որ իսկոյն հրամայեց Ներսէսին պատուով յետ բերել Պօլիս և շատ յարգ ու պատիւ տուեց:

Ներսէսի բացակայութեան ժամանակ գեղիւ Արշակը վերջապէս անարգ մահով մեռնելով, Պարսից Շապուհ թաղաւորը մեծ զօրք է ուղարկում Հայաստան քրիստոնէութիւնը ջնջելու, միանգամայն խոտտանալով Հայաստանի թաղը ուրաջեալ Մեհրուբան հայ-նախարարին: Այս բոլորը լսելով

Ներսէս, խնդրեց Թէոդոս կայսրից Թագաւորեցնել Արշակի որդի Պապին և նա էլ նրան օգնական զօրք տալով՝ Ներսէսի հետ միասին ուղարկեց Հայաստան, որ իսկոյն միացնելով նախարարներին՝ դիմադրեց Պարսիկներին: Հայոց զօրքը Զիրաւ դաշտի մէջ մեծ պատերազմ տալով Պարսիկ զւրքին՝ կատարելապէս յաղթեց նրան և Հայաստանը բոլորովին մաքրեց պարսիկներից:

Սակայն դժբախտաբար, երբ պատերազմից յետոյ Ս. Ներսէս անխոնջ կերպով աշխատում էր պատերազմի Թողած վերքերը առողջացնելու աւերակները կանգնել և այլն, Պապ Թագաւորը ընդհակառակը հետզհետէ աւելի և աւելի զեղխութեան մէջ էր անցկացնում իւր օրերը, որի պատճառով էլ շատ անգամ Ս. Ներսէսը ստիպուած էր լինում նրան խրատելու, զգուշացնելու և կշտամբելու: Բայց անխիղճ Պապը՝ անկարող լինելով բացարձակ Ներսէսի մի մագին անգամ դիպչելու, նրանից ազատուելու համար մտածեց մի զրոյսային միջոց և մի ամառ խաբէութիւնով հրաւիրեց նրան Նկեղեաց գաւառի Խախ աւանը, ուր ինքը ամառում էր և մի ճաշի ժամանակ Թագաւորն ինքն անձամբ իւր բարերարին մատոյց բաժակ, որի մէջ Թոյն էր խառնած. Ներսէսի զէմքն իսկոյն փոխուեց:

Սարսափելի շփոթութիւն տիրեց բազմականների վրայ և գլխաւոր նախարարները իսկոյն Թագաւորի սեղանը թողնելով՝ գնացին Ներսէսի մօտ և համոզում էին նրան զեղթափ ընդունել բայց երանելի Հայրապետը չուզեց նրանց լսել: Շատ բան խօսեց, զգուշացրեց նրանց, մարգարէութիւններ արաւ. յետոյ Աստուծուց Թողութիւն խնդրեց իրան մահ պատճառողների համար, իւր բոլոր ժողովուրդն ու հայրենիքը Աստուծուն

յանձնեց. օրհնեց բոլոր ներկայ եղողներին և ապա աչքերը դէպի երկինք վերցնելով՝ «Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ» ասաց ու աւանդեց իւր սուրբ հոգին:

Թէպէտ Պապ Թագաւորի հրամանով Թաղման հանդէսը շատ շքեղ կերպով կատարուեց և մարմինը Թիլ աւանի մէջ ամփոփուեց, բայց այնուամենայնիւ սուգ առաւ ամբողջ Հայաստանը, ամենքը խորին տխրութեան մէջ ընկան և բոլորը միաբերան կրկնում էին, թէ Հայաստանի փառքը վերջացաւ, որովհետեւ «Արդարը» իրենց միջեց հեռացաւ: Հայաստանի մէկ ծայրից սկսած մինչև միւս ծայրը ամեն մարդ սուգ էր աւնում և ողբում:

Ներսէս, մեռաւ, բայց իբրև ժառանգութիւն Թողեց իւր բարի օրինակները. նրա յիշատակը դարէ 'ի դար անջինջ է մնալու Հայաստանի զաւակների սրտերի մէջ:

Իսկ այսօր և յաւիտեան Մեծն Ներսէսի անունը միշտ օրհնութիւնով պէտք է յիշատակուի:



5005

դրեց իսկ ապա և միջնորդ լաթիմ ղոյող քանչոք քանչոք
« Եւ զոր լաթիմ տալով ղէջ » Եւ ղանչոքի ցանկի ղէջ

միջոց ղոյու ղաթ քանչոք և ղոյու
քանչոք մանրան ղոյու ղոյու ղոյու ղոյու

Զիս ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու
-աւ Զրոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու
դրոյող և մանր ղիս մանր ղոյու ղոյու ղոյու
լաթիմի ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու
իս ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու
-ա ղէ քոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու


Նաւորոյ և ղոյու

դաթ քանչոք մանր ղոյու ղոյու ղոյու
-իս ղէ Զմիջոք ղոյու ղէ ղոյու ղոյու ղոյու

Զիս ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու
աւիս ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու

ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու ղոյու

2002



1m

4475

« Ազգային գրադարան



NL0031407

4007h

